



22 (177). ԾՆՃՈՒՂ ՈՒ ՄՐՋԵՄ

Մարդ մե նստեր էր ըլլըրբ փլավ կուտեր, էն դիուց ճնճուղ կը թոնա դիկա, կը նստի մոտ, կտուց գերկրնցու, քանիմ՝ հատ կուտե, էդ վախտ մրջեմ վրա կը հասնի:

— Հատկի գո՛ղ,— կըսե,— զցորեն կուտիս հերք չէ, մկա լե մարդու բաժի՞ն կը թոցու, աներե՛ս, շա՛մ չընաս:

Ճնճուղ կը հեռոտի.

— Գող լե, աներես լե դո՛ւ իս ու քու պապն է: Դու էն մրջեմ չի՞ս, օր հատիկ կը գողնա, կը տանե ուր բուն: Գող ե՞ս իմ, թե՞ դու: Մրջեմն հանդարտ ու հատ-հատ կըսե.

— Օղո՛րդ է, ես հատիկ կը տանիմ, թե քաղելուց չետե աստ-ված խսմաթ տա: Դու հմալ չըս վա՛րվի, մեկ տեսար՝ թռար նստար վըր կռթին, դըռ հլա մածուն՝ կուտիս:

— Հմլա սլոչով սո՞ւտ:

— Ե՞ս ըսի:

— Հմա դու, բարակ ճիվ:

Ճնճուղ կը թոնա, կտուց մե էրկու կը դարկե, մրջեմ կը կծկի, զձեն կը թալե փոր, չը դինա յուր փախնի. վեռջ կը դառնա մարդուն, կըսե.

— Ճնճուղն ընձի կըսպանե, դու ձեն չը հանիս:

Մարդ կը տեսնա մրջեմի վիճակ, կը խղճա, կըսե.

— Զա՛նըմ, դուք չորի՞ն կը կովիք վըր իմ բլղըրե հատկուն: Ես իմ քար թալի, ձեր թև՞ն է ցավցի. լսե՛ք, իմ վճիռն իտամ:

— Ճշմարիտ կըսիս,— կը ճլվլա ճնճուղ,— տո՛ւր զքու վճիռ:

— Ճնճուղ ու մրջեմ, արեք ծուռ նստինք, շիփ-շիտակ խոսանք:
Օր ընձի մնա՝ մրջեմն օղորդ է, ընի չը գո՛ղնա, ընի ղթափած կը
տանն: Հմա դու, ճնճո՛ւղ, կը գողնաս, օր-ցերեկո՛ւ վ կը գողնաս:

Մրջեմ կողերի, կըսե.

— Իմ աչքով չըմ տե՛սի՛:

— Սա՛բր էրե, մրջե՛մ,— կըսե մարդ,— ճնճո՛ւղ, գու էկար,
կտուցգի յերկընցուցիր, իմ փլավ մեկ դախա կուտեր, կը պրծներ,
կը թռներ կէրթեր քու քեֆին: Մրջեմն արդար է: Քանի օր՝ հա՛մ սու-
տըսան իս, հա՛մ գող ու լեզվանիկ, ես գքու յոտներ կը կապիմ. օր
էս օրվընե չը կոնաս քելիս:

Ըշտե էդ օրվընե՛՝ ճնճուղն էլ չը կոնա քելե, կը թովուկա, օր
կոնա քելե:

